

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով
Ո Ր Ո Շ ՈՒ Մ 14/4
6 մարտի 2018թ.

Քննարկվեց Ա/Ձ Գրիգոր Մկրտչյանի բողոքը 2018թ. հունվար և փետրվար ամիսների համար ներկայացված Արտոնագրային հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարություններում թույլ տրված վրիպակի վերաբերյալ:

Ա/Ձ Գրիգոր Մկրտչյանի բերված փաստարկները.

Ա/Ձ Գրիգոր Մկրտչյանը հայտնում է, որ սույն թվականի հունվարի 28-ին Արտոնագրային հարկի օբյեկտների տվյալներ բաժնում կատարել է օբյեկտի գրանցում և համակարգչի խափանման պատճառով նույն գրանցումը կատարվել է կրկնակի անգամ, ինչպես նաև օբյեկտի գրանցման ժամանակ տեղի է ունեցել վրիպում և անհատ ձեռնարկատիրոջ գործունեության հասցեի փոխարեն գրանցվել է նրա գրանցման հասցեն:

Ելնելով վերոգրյալից՝ Ա/Ձ Գրիգոր Մկրտչյանը խնդրում է չեղյալ համարել վերոնշյալ գրանցումը և հունվար, փետրվար ամիսների համար ներկայացված Հայտարարություններն արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ, և հնարավորություն տալ գրանցելու նոր օբյեկտ:

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև՝ Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության.

Քննարկման ընթացքում նշվեց, որ 2018թ. հունվարի 28-ին Ա/Ձ Գրիգոր Մկրտչյանի կողմից ներկայացվել են 2018թ. հունվար և փետրվար ամիսների Արտոնագրային հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունները, ինչպես նաև սահմանված ժամկետում վճարվել են հունվար և փետրված ամիսների համապատասխան արտոնագրային հարկի գումարները: Սակայն նշված հայտարարություններում թյուրիմացաբար անհատ ձեռնարկատիրոջ գործունեության հասցեի փոխարեն նվել է նրա իրավաբանական հասցեն: Մասնավորապես, 2018թ. հունվար և փետրված ամիսների Արտոնագրային հարկ վճարելու վերաբերյալ հայտարարություններում ք.Երևան, Ավան թաղամաս, Սաֆարյան 142/2 հասցեի փոխարեն նշվել է ք.Երևան, Ավան, Թումանյան թաղ. 13/3, բն. 33 հասցեն:

Այս կապակցությամբ հարկ է նշել, որ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ վարչարարություն իրականացնելիս վարչական մարմիններին արգելվում է միայն ձևական պահանջների պահպանման նպատակով անձանց ծանրաբեռնել պարտականություններով կամ մերժել նրանց որևէ իրավունք տրամադրելը, եթե նրանց վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարված են:

Քննարկվող դեպքում Ա/Ձ Գրիգոր Մկրտչյանի կողմից սահմանված կարգով ներկայացվել են 2018թ. հունվար և փետրվար ամիսների Արտոնագրային հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունները, ինչպես նաև սահմանված

Ժամկետում վճարվել են համապատասխան արտոնագրային հարկի գումարները: Այսինքն, Ա/Ձ Գրիգոր Մկրտչյանի կողմից իր վրա դրված պարտականությունները բովանդակային առումով կատարվել են: Հետևապես վերը նշված հայտարարություններում թյուրիմացաբար հասցեի սխալ նշելը չի կարող հիմք հանդիսանալ հարկ վճարողին լրացուցիչ պարտականություններով ծանրաբեռնելու համար կամ մերժելու նրան որևէ իրավունք տրամադրելը:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով ՀՀ հարկային օրենսգրքի 443-րդ հոդվածի, «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով Հանձնաժողովը

ո Ր Ո Ղ Ո Ւ Մ Է՝

1. Ա/Ձ Գրիգոր Մկրտչյանի բողոքը բավարարել:
2. 2018թ. հունվար և փետրվար ամիսների համար ներկայացված Արտոնագրային հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարությունները համարել տրամադրված ք.Երևան, Ավան թաղամաս, Սաֆարյան 142/2 հասցեի համար:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ